ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1160-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՔԻ ԱՐՄԱՎԻՐ ՔԱՂԱՔ ԿՈՄԻՏԱՍ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ 10 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՖԻՐՈՒԶԱ ՇԱՄՈՆԻ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետությանկառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդկետի 1-ինենթակետով, 50-րդ և 51-րդ կետերով,Հայաստանի Հանրապետությանկառավարության2006թվականի մայիսի18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի8, 11-րդկետերովև 13-րդ կետի <<ա>> և <<բ>> ենթակետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի <<Շինությունների նպատակային նշանակության դասակարգման ցանկը սահմանելու մասին>> N600-Ն որոշման 1-ին հավելվածի 1-ին, 2-րդ 4-րդկետով ,հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Կոմիտաս փողոց 1-իննրբանցք 10 հասցեում 04-001-0224-0008 կադաստրային ծածկագրով հողամասումգտնվող կառույցները իրականացվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և չեն գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օտարման գոտիներում և հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3

նթակետերով սահմանված պահանջներին, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի ավագանու 2023թ.դեկտեմբերի 21-ի թիվ 10 նիստի 136-Նորոշումը, և Ֆիրուզա Շամոնի Եղիազարյանի 22.01.2024 թվականի թիվ 0383 դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Վերականգնել Ֆիրուզա Շամոնի Եղիազարյանի սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Կոմիտաս փողոց 1-ին նրբանցք 10 հասցեում 04-001-0224-0008 կադաստրային ծածկագրով գույքային միավորների՝ 510.6 քմ օրինական հողամասի վրա1985թ. կառուցված125.9 քմմակերեսով բնակելի տան նկատմամբ,իսկ պարիսպը համարել ինքնակամ:

2.Ֆիրուզա Շամոնի Եղիազարյանին սեփականության իրավունքը Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Կոմիտաս փողոց 1-ին նրբանցք 10 հասցեում 04-001-0224-0008 կադաստրային ծածկագրով գույքային միավորների՝ 510.6 քմ մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը ՝48.0 քմ ներքին և57.23 քմ արտաքին մակերեսով ճանաչել օրինական:

3.Ընդունել ի գիտություն,որ

1)կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2)շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Սահմանել, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում , Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի բյուջե պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի18-ի <<Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով հաշվարկված՝ ընդհանուր 57.23 քմ մակերեսով ինքնակամ կառուցված բնակելի նշանակության շինության օրինականացման յուրաքանչյուր քառակուսի մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 1673 ՀՀ դրամ ընդհանուր՝ 95746 (իննսունհինգ հազար յոթ հարյուր քառասունվեց) ՀՀ դրամ:

5.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Արմավիր քաղաքի Կոմիտաս փողոց 1-ին նրբանցք 10 հասցեում գտնվող գույքի հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման ծածկագիրն է 2023PSAWQF:

6.Ուժը կորցրած ճանաչել 2024թ փետրվարի 27-ի թիվ 0325-Ա որոշումը:

7.Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության Օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ. ՍԱՐԳՍՅԱՆ**

2024թ. սեպտեմբերի 9
ք. Արմավիր